

րութեամբ մը շրջապատուած՝ ուր այլազգիները ազօթատեղի շինած են: Ըստ աւանդութեան՝ կ'ըսուի թէ հոս սղոցուեցաւ Եսայի մարգարէն Մանասէ թագաւորէն, և հոն ալ թաղուեցաւ, ինչպէս Յայտաւորքը կը գրէ ըսելով. «Թաղեցաւ հանդէպ ականն Սելումայ ներքնոյն» (Հան. էջ 254):

անուան ազաւաղումն է: Յոբայ հորին կամ Պիր էշուպին աւանդութիւնը սակայն կը յիշէ Երուսաղէմի մօտ Սիլուան գիւղի ժողովուրդը եւ հետեւեալն է. «Յոբ նահապետք կը հիւանդանայ, այնպէս սասիկ որ կ'որգնօսի ան, եւ կը քաշուի Պիր էշուպի արեւմուտք՝ այրի մը մէջ, ու անոր կիսը ամէն առաւօտ կուգայ եւ կերակուր կը բերէ: Յոբ ամէն օր յուացուելու կուգայ ջրով լեցուն խոռոչի մը մէջ որ մինչեւ այժմ գոյութիւն ունի: Ասուածոյ սղորմութեամբ Յոբ կ'աւողջանայ եւ երիտասարդի մը կերպարանք կը ստանայ»:

Չրով լեցուն նոյն խոռոչը յետոյ կ'ըլլայ աղբիւր մը, որ այժմու ջրհորն է: Տեղւոյն ժէլահները շատ յստակօրէն կը զանազանեն Պիր էշուպի ջուրը որ քաղցրահամ է եւ Սիլուանի աղբիւրը՝ որ դառնահամ է: Այս իրողութիւնը շատ հետաքրքրական է վասնզի Յովսէպոս բացայայտօրէն կը խօսի Սիլուանի քաղցրահամ ջուրի մասին, որ ակնարկութիւն մըն է Յոբայ ջրհորին (P. E. F. 1874, էջ 110-111):

(*) 1. Եսայի մարգարէի մասին կան նաեւ այս աւանդութիւններ՝ եզեկիա թագաւորին ժամանակ. մինչ այս վերջինը չէր շինած իր աւագաններն ու հորերը, բիշ մը ջուր բղխեցաւ Եսայի մարգարէին աղօթքովը, որպէսզի ջուրի պակասութենէն քաղաքը չկորսուի, որովհետեւ ժողովուրդը պաշարուած էր օտարականներէն: Թշնամիները կը հարցնէին թէ ուրկէ՛ ջուր պիտի խմէին, իրողութիւնը չգիտնալով: Թշնամիները քաղաքին մօտենալով եկան բանակիլ ի Սելումայ: Երբ հետեաներ կուգային ջուր քաշելու, աղբիւրին ջուրը կը բարձրանար եւ անոնք ջուր կ'ունենային, իսկ երբ օտարականներ գային՝ ջուրը փախած կ'ըլլար արդէն: Ահա մինչեւ այսօր ջուրը յանկարծօրէն կը վազէ այս հրաշքը յայտնի ըլլալու համար:

2. Վասնզի այս պարագան Եսայի մարգարէին ձեռնովը կատարուած է, ժողովուրդը, ի յիշատակ, խնամով եւ պատուով թաղեց գանիկա աղբիւրին մօտ, որպէսզի անոր աղօթքներով մինչեւ վերջ այս ջուրին վայելքը ունենան (P. G. M. 43, 397):